# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ԱՊՐԻԼԻ, 2016 թ.
№ 6 (991)

*Թերթի առաջին համարը լույս է տեսել1965 թ. մարտի 11-ին*
*Երկշաբաթաթերթ ● հրատարակման 50 -րդ տարի*

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


# ՊԵՏՔ Է ԼԻՆԵԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ՀԶՈՐ

**Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները ապրիլի 24-ին բազմամարդ երթով այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի փուրք մատուցելու Ցեղասպանության 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին:**

«Չդատապարտված ցեղասպանությունը ծնում է նոր ցեղասպանություններ», «Ո՛Չ մարդկության դեմ իրականացրած բոլոր տեսակի հանցագործություններին», «Հայկական եղեռնը պատերազմի ամենամեծ ոճիրն էր», «Ճանաչում, դատապարտում, հատուցում» և այլ եռալեզու պաստառներով ու դրոշներով աբովյանականները ևս մեկ անգամ պահանջատիրական իրենց խոսքը բարձրաձայնեցին՝ Հայոց ցեղասպանության ճանաչում ու դատապարտում:

Այնուհետև Հայոց Մեծ Եղեռնի հուշարձանի մոտ ծաղկեպսակ դրեցին և մեկ րոպե լռությամբ հարգեցին 1915-1923 թթ. Օսմանյան Թուրքիայում նահատակված 1.5 միլիոն զոհերի անմեղ հիշատակը:

ՀՀ ԱԺ փոխնախագահ, Մանկավարժական համալսարանի դասախոս Էդուարդ Շարմազանովը Ցեղասպանության 101-րդ տարին խորհրդանշական համարեց: «Այլևս չպետք է լացենք, այլ պետք է կռվենք միաժամանակ գիտության, մշակույթի, կրթության, բարոյական, ռազմական և դիվանագիտական ճակատներում՝ առանցքում ունենալով Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն ու Եռաբլուրը: Պետք է հասկանանք, որ այլ ճանապարհ չունենք, Աստված հային ստեղծել է այս տարածաշրջանում, և հայը պետք է այստեղ ապրի, բարգավաճի՝ անկախ նրանից, թե քոչվոր ցեղերն ինչ են կամենում: Սա ոչ թե լացի, այլ միասնության օր է, գալիս ենք ոչ թե լացելու, այլև ապացուցելու, որ չնայած կոտորածին՝ մենք եղել ենք, կանք ու կլինենք»,- ասաց Էդուարդ Շարմազանովը և հավելեց, որ յուրաքանչյուր ժողովուրդ ինքն է դարբինն իր ապագայի: Աժ փոխնախագահն ընդգծեց, որ ապագա մանկավարժները ևս մեծ անելիք ունեն. նրանք պետք է դաստիարակեն քրիստոնեական, բարոյական, ազգային և կիրթ սերունդ:

Մանկավարժական համալսարանի երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանն ընդգծեց. «Մեր անելիքներն ու գործողությունները չպետք է դադարեցնել, քանի որ այս նախաձեռնությանը միացել է ողջ աշխարհի հայությունը: Կարծում եմ վաղ թե ուշ տեղի կունենա այն, ինչի մասին բոլորս երազում ենք, ավելին ասեմ՝ ես վստահ եմ, որ կճանաչվի ու կդատապարտվի Հայոց ցեղասպանությունը: Պետք է լինենք ուժեղ, միասնական և հզոր»:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

# Ժամանակակից լաբորատորիաներ՝ Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում բացվեց նոր 4 ուսումնափորձնական լաբորատորիա՝ բուսաբանության և բույսերի ֆիզիոլոգիայի, աշխարհագրության գիտակրթական, ընդհանուր և անօրգանական քիմիայի և ֆիզիկայի ուսուցման մեթոդիկայի:

Բացման արարողությանը ներկա էր ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ով լաբորատորիաների բացումը համարեց Մանկավարժական համալսարանի կարևորագույն ձեռքբերումներից և գործունեության արդյունքներից մեկը:

«Այս ամենը երկարատև գործընթացի արդյունք է: Նպատակ է դրվել, որ Մանկավարժական համալսարանը ևս ունենա աշխարհի առաջատար համալսարանների լաբորատորիաներին համարժեք կենտրոններ: Պետք է փորձենք ապագա ուսուցիչներին զինել ժամանակակից տեխնոլոգիաներով, իսկ հետագայում այդ գործնական հմտությունները նրանք կկիրառեն դպրոցներում»,- ասաց Լևոն Մկրտչյանը և հավելեց՝ եթե ուզում ենք, որ երեխան լինի հետաքրքրված, իսկ ուսուցիչն էլ աշխատի նվիրված, ուրեմն պետք է լինեն մաքուր, գեղեցիկ և լավ կահավորված մասնագիտական դասասենյակներ:

Համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ասաց. «Մենք ունենք այնպիսի պայմաններ, որ ապագա ուսուցիչը կարողանա գիտությունն ուսումնասիրել առավել արդիական սարքավորումներով, ինչը ծայրաստիճան կարևոր է ուսանողների համար»:

Մանկավարժական համալսարանի Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիան համալրվել է նաև տարածաշրջանում իր նմանը չունեցող միակ սարքավորումով: Ֆրանսիայից ձեռք բերված Ռամանյան սպեկտրոսկոպ հետազոտություններ իրականացնող էքսպերիմենտալ սարքի կիրառության ոլորտը շատ ընդգրկուն է. այն որոշակի նշանակություն կարող է ունենալ ռազմարդյունաբերության ոլորտում: Սարքը ճշգրտորեն կարող է որոշել ցանկացած նյութի ստույգ բաղադրությունը:

«Սա բացառիկ սարք է, ընդհանրապես Ռամանյան սպեկտրոսկոպիան անալիտիկական եղանակով նյութերի հետազոտման ամենահզոր եղանակներից մեկն է համարվում: Այն հետազոտում է բազմազան օրգանական և ոչ օրգանական նյութեր: Այս լաբորատորիայում այն կկիրառվի բյուրեղների կառուցվածքի հետազոտությունների համար: Սարքը ռազմական ոլորտում ևս կարող է օգտագործվել և ունենալ արդյունավետություն»,- ասաց տեսական ֆիզիկայի և ֆիզիկայի մեթոդիկայի ամբիոնի վարիչ Էդուարդ Կոկանյանը:

Լաբորատորիաները հագեցած են ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով: Նոր լաբորատորիաները կնպաստեն ուսումնական և գիտական հետազոտություններ իրականացնելուն և կբարելավեն ուսանողների պրակտիկ գործունեությունը:

Լաբորատորիաները բացվել են ՀՀ ԿԳՆ-ի գիտության պետական կոմիտեի աջակցությամբ և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

# Ստորագրվեց հուշագիր՝ նվիրված «IELTS նախապատրաստական դասընթացներ» ծրագրին

Մանկավարժական համալսարանը և Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղն այսուհետ համագործակցելու են «IELTS նախապատրաստական դասընթացներ» նախագծի շրջանակում: Մանկավարժական համալսարանի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը և Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արևիկ Սարիբեկյանը կնքեցին հուշագիր, ըստ որի Մանկավարժական համալսարանում իրականացվելու են IELTS քննության նախապատրաստական դասընթացներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության առաջարկվելու են համալսարանի ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր:

IELTS (International English Language Testing System) քննությունն անգլերեն լեզվի ամենաճանաչված թեստն է աշխարհում: Աշխարհում տարեկան շուրջ 2 միլիոն մարդ հանձնում է IELTS քննություն: 9 000 կազմակերպություններ աշխարհի 140 երկրում, այդ թվում՝ պետական, ակադեմիական և աշխատանքային հաստատություններ ճանաչում և ընդունում են IELTS քննությունը: Հայաստանում ևս, կառավարության որոշմամբ, IELTS քննությունն ընդգրկվել է որպես անգլերեն լեզվի թեստ՝ ասպիրանտուրա ընդունվելու համար:

ՀՀ ԿԳ փոխնախարար Կարինե Հարությունյանը, կարևորելով հուշագրի ստորագրումը, ընդգծեց. «Կրթական համակարգում աստիճանաբար տեղի են ունենում համալսարանների միջազգայնացմանը միտված զարգացումներ, ինչպես նաև հնարավորություն է ընձեռվում ուսանողներին՝ ուսումնառել աշխարհի առաջատար բուհերում»: Փոխնախարարը նկատեց, որ կենտրոնի բացումը Մանկավարժական համալսարանին հնարավորություն կտա ձեռնարկատիրական գործունեությունը զարգացնել, քանզի այստեղ կարող են ուսանել ոչ միայն ուսանողները, այլև ցանկացած անձ:

Բուհի պրոռեկտոր Արա Երեմյանը նկատում է՝ ծրագրի ներդրման համար բավականին երկար աշխատանք է տարվել: «Ծրագիրը կխթանի ոչ միայն Մանկավարժական համալսարանի, այլև առհասարակ բոլոր ուսանողների՝ այս ծրագրով առավել լավ նախապատրաստվելուն: Մեր ուսանողների համար կարևոր է օտար լեզվի լավ իմացությունը, այն հնարավորություն կընձեռի, որ բուհը միջազգային ասպարեզում ավելի տեսանելի լինի և կարողանա իրականացնել փոխանակման առավել ընդլայնված ծրագրեր»,- ընդգծեց պրոռեկտորը և հավելեց՝ դասընթացներն իրականացվելու են արդի տեխնոլոգիաների և գերժամանակակից մեթոդների կիրառմամբ:

«Մեր համագործակցությունը Մանկավարժական համալսարանի հետ շատ երկար պատմություն ունի, և ուրախ եմ, որ այս նախաձեռնությամբ այն թևակոխեց մի նոր փուլ: IELTS քննությունը միջազգայնորեն ճանաչելի թեստ է, որի հանձնումը հնարավորություն է ընձեռում ուսանել լավագույն համալսարաններում կամ աշխատել արտերկրում: Ուրախ եմ, որ ՀՀ-ում նույնպես կարող են հանձնել այս քննությունը, որն աստիճանաբար մեր երկրում ավելի մեծ ճանաչում է ստանում: Բրիտանական խորհուրդը Հայաստանում IELTS քննություն կազմակերպող միակ մարմինն է և նախորդ տարի անցկացրել է ավելի քան 1000 քննություն»,- նշեց Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արևիկ Սարիբեկյանը:

Նա ընդգծեց նաև, որ հաշվի առնելով քննության հանդեպ ցուցաբերվող մեծ հետաքրքրությունն ու պահանջարկը, Բրիտանական խորհուրդը որոշեց նախաձեռնել IELTS քննության նախապատրաստական դասընթացներ: Դասընթացներն անցկացվելու են Մանկավարժական համալսարանի մասնաշենքում և դասավանդելու են Բրիտանական խորհրդի որակավորում անցած ուսուցիչները: Դասընթացի տևողությունը վեց շաբաթ է, ընդհանուր՝ 34 ժամ: Սա քննությանն արագորեն ու որակյալ պատրաստվելու հնարավորություն է:

Հանդիպման ավարտին Մանկավարժական համալսարանի «Ավե Մարիա» երգչախումբը Արտաշես Բաբուրյանի խմբավարությամբ կատարեց միջազգային ուսանողական հիմնը:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

# «Կրթությունը միջազգային հաղորդակցության ամենաարդյունավետ ճևն է»

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր Մոսկվայի կրթական հաստատությունների ղեկավարների և ուսուցիչների պատվիրակությունը: Այցը կազմակերպվել էր Ռուսաստանի Դաշնության ազգային պետական քաղաքականության գործունեության (2015-2025թթ.) իրականացմանն ուղղված միջազգային համագործակցության և պետական ծրագրերի շրջանակներում:

Ռուսական պատվիրակության նախաձեռնությամբ կազմակերպված այցի, բուհի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպման նպատակն էր միավորել մանկավարժական համայնքի ներուժը, ծանոթանալ ՀՀ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական չափորոշիչներին, փոխանակել հարուստ մանկավարժական փորձը՝ Հայաստանում և Ռուսաստանում խթանելով դպրոցականների ուսուցման գործընթացը, ինչպես նաև հետագա համագործակցության համար հաստատել ամուր գործընկերային կապեր:

ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ներկայացրեց իր ղեկավարած ուսումնական հաստատությունը՝ նկատելով, որ Հայաստանի խոշորագույն մանկավարժական բուհը կրթական հաստատություն է ողջ աշխարհի հայերի համար:

Ռեկտորը կարևորեց ՌԴ-ում հայկական դպրոցների առկայությունը՝ նկատի

➤ 3

# «Կրթությունը...

➢ 2 ունենալով հայկական ամենամեծ համայնքի առկայությունը:

Խոսելով Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ջերմ հարաբերությունների և համագործակցության մասին՝ Ռուբեն Միրզախանյանը վստահեցրեց. «Սա սոսկ մանկավարժների համագործակցություն չէ. 4-րդ տարին անընդմեջ կազմակերպվում է «Ամառային դպրոց» միջազգային ծրագիրը, ինչը նաև ուսանողական շփումների, համագործակցության հիանալի հարթակ է»:

Պատվիրակության ղեկավար, Մոսկվայի N 967 դպրոցի տնօրեն Արմինե Առաքելյանը նկատեց, որ կրթությունը միջազգային հաղորդակցության ամենաարդյունավետ ձևն է.«Ակնհայտ է, որ գլոբալիզացիայի դարաշրջանում տեղեկատվության փոխանակումը, գիտական հետազոտությունը, մասնագետների միջև կրթական ձեռքբերումները տնտեսության և սոցիալական ոլորտում հաջողության հիմնական խթանն են, ազգային մշակույթի առանձնահատկությունները, մեր ժողովուրդների աշխարհայացքն ու փորձի փոխանակումը՝ Հայաստանի և Ռուսաստանի կրթական համակարգի զարգացման գլխավոր նախապայմանները:

Արմինե Առաքելյանը հայերեն և ռուսերեն լեզուների ուսուցումը կարևորեց Ռուսաստանում հայ երեխաների ադապտացման, ինչպես նաև այդ երկրից Հայաստան վերադարձածների լեզվական անջրպետը հաղթահարելու տեսանկյունից:

Պատվիրակության ղեկավարը գիտաժողովի շրջանակներում անցկացվող հանդիպման համար շնորհակալական նամակ հանձնեց ՀՊՄՀ-ի ռեկտորին, իսկ բուհի թանգարանին փոխանցեց Ռուսաստանի մասին պատմական գիրք:

ԿԳ նախարարության Արտաքին կապերի և սփյուռքի վարչության մասնագետ Ամալյա Քոչարյանը կարևորեց պատվիրակության այցը՝ նշելով, որ ներկայացված բոլոր դպրոցներում դասավանդվում է հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն առարկաները, ինչը կարող է նախադեպ դառնալ ռուսաստանյան այլ դպրոցների համար ևս:

Ռուս-հայկական կրթական համագործակցության շրջանակներում ապրիլի 28-ից մայիսի 3-ը Հայաստանում անցկացվող միջազգային գիտաժողովը կլրացվի հանդիպումներով և համագործակցության հուշագրերով:

Ռուս պատվիրակները կլինեն կրթական և մշակութային այլ հաստատություններում ևս:

Հանդիպումը շարունակվեց կրթական ոլորտում առկա խնդիրների քննարկմամբ.հյուրերը այցելեցին բուհի թանգարան, եղան Առաջին համալսարանական ռադիոյում, ապա նաև ծանոթացան Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիայի գործունեությանը:

***Մարինե ԱՂԵԿՅԱՆ***

# Հանուն մագիստրոսական կրթության առաջընթացի

Մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնը պարբերաբար մագիստրոսական հետազոտական աշխատանքների քննարկումներ է կազմակերպում, որը դառնում է յուրօրինակ հաշվետվություն: Հերթական կոնֆերանսը ապրիլի 20-ին էր, և ներկաներն էլ մագիստրոսական կրթության առաջընթացի համար շահագրգռվածներն էին:

«Այս կոնֆերանսը նվիրված է Հայաստանի անկախության 25-ամյակին,-ասաց ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր Աիդա Թոփուզյանը: -Մեր մագիստրոսները առաջին սերունդն են, որ կրթություն են ստացել Անկախ Հայաստանի օրոք: Նրանք անցել են մեր երկրի Անկախության բոլոր փուլերով ու գրեթե մեր երկրի տարեկիցն են: Անկախության սերունդը նաև սահմանին կանգնած զինվորներն են, ովքեր գործով ապացուցեցին իրենց նվիրումը Հայրենիքին»:

Ա. Թոփուզյանը հավելեց, որ մագիստրոսների հետազոտական աշխատանքները այս անգամ կտպագրվեն իրենց ղեկավարների հետ համահեղինակությամբ:

Պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Սրբուհի Գևորգյանը փաստեց, որ մագիստրոսական աշխատանքների արդյունքների նմանօրինակ քննարկումների մշակույթ է ձևավորվել մեզանում և շեշտադրեց, որ Մանկավարժական համալսարանը կարևորվում է մագիստրոսական կրթությունը և մեծ աշխատանք է ծավալում մագիստրատուրայի կայացման ու զարգացման ուղղությամբ:

«Մենք կարողացել ենք գրավչություն ապահովել մասնագիտական որակի առումով, որովհետև մեր մագիստրատուրայում սովորում են ոչ միայն մեր բուհի բակալավրիատի, այլև տարբեր բուհերի շրջանավարտներ»:

Պրոռեկտորը կարևորեց կրթության շուկայում մրցունակության և մասնագիտական գրավչության ապահովումը: Միաժամանակ ընդգծեց պլենար նիստի երկու զեկուցումների բովանդակային խնդիրները, թեմաներ, որոնք հրատապ են ու կարևոր ոչ միայն կրթական, այլև հասարակական գործընթացների տեղաշարժերի արտացոլման առումով:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը նկատեց, որ գիտատեխնիկան առաջընթացի ժամանակաշրջանում շատ լուրջ մրցակցություն ունենք, որ մրցակիցները համակարգիչներն են, որոնք մեր փոխարեն տալիս են բոլոր հարցերի պատասխանները: Դեկանը բարձրաձայն մտորեց.«Մենք՝ դասավանդողներս, ի՞նչ ունենք հակակշիռ բարձր տեխնոլոգիաներին: Այդ մարտահրավերներին դիմակայելու համար մեզ մտածող մասնագետներ ու մագիստրոսներ են պետք»:

Կրթրության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզան Պետրոսյանը առողջ հասարակության ձևավորման տեսանկյունից կարևորեց կրթության և ուսուցչի դերը ժամանակակից տեխնոլոգիաների դարում:

«Միայն համախմբված և ներդաշնակ աշխատանքն է արդյունք տալիս, մեզնից յուրաքանչյուրը սիրով պետք է անի իր գործը, որ մեր համալսարանը մշտապես մնա լավագույնների շարքում»,-որպես բոլոր ելույթների ամփոփում՝ հավելեց Ա. Թոփուզյանը:

Պլենար նիստում ներկաները լսեցին երկու մագիստրոսի զեկուցում: Սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Սարգսյանի «Սոցիալական մանկավարժի դերը ընտանիք-դպրոց համագործակցության համատեքստում» (ղեկավար՝ Ա. Թոփուզյան) և Մանկավարժություն և մեթոդիկա, տարրական կրթություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Արշակյանի «Ուսանողների ուսումնական գործունեության մոտիվացիան» (ղեկավար՝ Լ. Պողոսյան) հետազոտական աշխատանքների արդյունքները:

Գիտաժողովի աշխատանքն ընթացավ մասնախմբերում, որը ղեկավարեցին Հակոբ Թադևոսյանը և Լուսինե Պողոսյանը: Այնուհետև մասնակիցներն ամփոփեցին գիտաժողովի աշխատանքը:

***Միլվա ԱՍՐՅԱՆ***

# «Երիտասարդներն ապացուցեցին, որ Տիգրան Մեծի սերունդն են»

Մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետում վաղուց ավանդույթ է դարձել քաղաքական արդիական թեմաների՝ նշանավոր դեմքերի և դեպքերի շուրջ դասախոսությունների և քննարկումների կազմակերպումը: Հերթական հանդիպմանը մանկավարժական համալսարանի դասախոս, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Շիրինյանը պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ քննարկեց Արցախյան երկրորդ կամ, ինչպես ասում են, քառօրյա պատերազմը:

Խոսելով Արցախյան քառօրյա պատերազմի մասին՝ քաղաքագետն ընդգծեց. «Մի բան պարզ է և ակնառու, որ մեր զորքը փայլուն է կռվել, մեր զինվորները անձնազոհության օրինակ ցույց տվեցին, որն աննախադեպ է համաշխարհային քաղաքական բեմահարթակում, իսկ հայ գեներալը դրսևորեց ռազմավարության փայլուն օրինակներ այն դեպքում, երբ մեր ուժային ռեսուրսները տարբեր էին: Ստեղծված իրավիճակում բանակը կարողացել է կողմնորոշվել և մոբիլիզացվել ժամանակին անհրաժեշտ քանակով և որակով»:

Խոսելով Արցախի պաշտպանական բանակի գերազանց վարքի մասին՝ Լևոն Շիրինյանը նկատեց նաև, որ նրանք տապալեցին երեք բանակի գլխավոր շտաբների նախատեսած պլանները: «Ես խաղաղության կոչերին չեմ հավատում, դա շատ վտանգավոր է, պետք է պատրաստ լինել պատերազմի, այս հարցն այլ լուծում չունի, պետք է ամեն օր պատրաստվել պատերազմի, որպեսզի անընդհատ չհայտնվենք նման իրավիճակում»,- ասաց քաղաքագետը:

Խոսելով միջազգային հանրության մասին՝ բանախոսը նկատեց. «Միջազգային հանրությանը ձեռնտու է, որ պատերազմական գործողությունները մղվեն Անդրկովկասում՝ Եվրոպայից ու ԱՄՆ-ից հեռու»:

Անդրադառնալով հայ երիտասարդների հավախմբվածությանը՝ Լևոն Շիրինյանը հիացմունքով նկատեց. «Այս տարիների քարոզչությունը երիտասարդության շրջանում փայլուն արդյունք է տվել, նրանք ապացուցեցին, որ Տիգրան Մեծի սերունդն են. հենց դրանում էր կայանում մեր հաղթանակը»:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

# Գեղանկարիչների միջազգային սիմպոզիում

Մայիսի 1-10-ը Մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի նախաձեռնությամբ արտերկրից հրավիրված ճանաչված գեղանկարիչների մասնակցությամբ տեղի կունենա պլեներային գեղանկարչության սիմպոզիում՝ «Պլեներ ՀԱՅԱՍՏԱՆ-2016» խորագրով:

Մանկավարժական համալսարանում մեկնարկած սիմպոզիումի բացման արարողությանը համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը նկատեց, որ չնայած Հայաստանը հայտնի է որպես ամենաարևոտ երկիր, սակայն հյուրերն իրենց հետ ևս բերել են արև: «Մեր չքնաղ բնությունն իր ամբողջության մեջ տեսնելու համար անհրաժեշտ է նաև արև: Վստահ եմ Հայաստանում անցկացրած այս օրերին կստանաք ամենադրական տպավորությունները, այն ստեղծագործական առումով կլինի շատ արդյունավետ»,- ասաց ռեկտորը և հավելեց, միջազգային այս սիմպոզիումը կդառնա ավանդական և կիրականացվի յուրաքանչյուր տարի:

«Դուք հնագույն պատմություն ունեցող երիտասարդ հանրապետությունում եք»,-հյուրերին այսպես ողջունեց կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը՝ վստահեցնելով, որ միջազգային պլեների կազմակերպումն աննախադեպ ձեռնարկ է բուհական համակարգում: Պրոֆեսորի կարծիքով՝ ոլորտի լավագույն նկարիչների մասնակցությունը կնպաստի, որ Մանկավարժականի ուսանողներն ուսումնասիրեն նրանց գեղանկարչական վարպետության գաղտնիքները, լսեն մասնագիտական խորհուրդներ, ծանոթանան և ծանոթացնեն իրենց ազգային մշակույթին:

«Մեր երկրի համար դժվարին ժամանակներում անգամ հայ ժողովուրդը պատրաստ է հյուրընկալել և հիացնել իր մշակույթով»,-նշեց Փարավոն Միրզոյանն ու ներկայացնելով 10-օրյա պլեների օրակարգը՝ հավելեց, որ նկարները ցուցադրվելու են նախ Հայաստանի ազգային պատկերասրահում, ապա իրենց տեղը կգտնեն Մանկավարժականի թանգարանում:

Լեհաստանից հայ գեղանկարիչ Գագիկ Պարսամյանը փոխանցեց մասնակիցների հիացմունքն ու երախտագիտությունը, քանի որ 3 տարի շարունակ փորձել են կազմակերպել և իրականություն դարձնել այս ձեռնարկը: Բազմաթիվ պլեներների մասնակցած գեղանկարիչը վստահեցնում է՝ նման սիմպոզիումները մեծապես նպաստում են երկրի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու՝ Հայաստանը ճանաչելի դարձնելու տեսանկյունից:

Գեղանկարչության միջազգային սիմպոզիումի մասնակիցները շնորհակալություն հայտնեցին ՀՊՄՀ-ի ռեկտորին հյուրընկալության համար և բուհին հանձնեցին խորհրդանշական նվերներ: Իսկ Անգլիայից ժամանած նկարիչ Օլգա Շիենկոյի նվերն ամենաուրախալին էր հատկապես ուսանողների համար. նրա հրավերով գեղարվեստական կրթության ֆակուլտետի լավագույն շրջանավարտներից մեկը հնարավորություն կունենա մասնագիտական այցով 10 օրով լինել Անգլիայում:

Սիմպոզիումը նպատակ ունի հրավիրյալներին ծանոթացնել Մանկավարժական համալսարանի կրթական համակարգին, բուհի կառուցվածքին ու գործունեությանը, ինչպես նաև խորացնել և զարգացնել տարբեր երկրների հետ կրթական ու մշակութային կապերը: Սիմպոզիումի շրջանակում կանցկացվեն զրույցներ, բանավեճեր, կքննարկվեն տարաբնույթ խնդիրներ, կիրականացվի փորձի փոխանակում՝վարպետաց դասեր, հյուրերը նաև կծանոթանան համալսարանի նկարիչ մանկավարժների ուսումնական գործընթացին, արվեստանոցների պատրաստվածությանը, ուսանողների ներգրավվածությանը կրթական նոր համակարգին:

Ձեռնարկի շրջանակներում կկազմակերպվեն նաև այցելություններ Հայաստանի պատմական և մշակութային տեսարժան վայրեր՝ բազմակողմանի ծանոթանալու Հայաստան աշխարհին և ավելի մոտիկից զգալու հայ գեղանկարչի ներշնչանքի աղբյուրը, այցերի ընթացքում նկարիչները կնկարեն՝ համալսարանի նկարիչ-մանկավարժների հետ:

Սիմպոզիումը կավարտվի ամփոփիչ ցուցահանդեսով Հայաստանի Ազգային Պատկերասրահում. յուրաքանչյուր հեղինակից մեկական լավագույն աշխատանք կնվիրաբերվի Մանկավարժական համալսարանին:

*Սոնա ԱՐԱՄՅԱՆ*

# «Պարը եղել և մնում է հայ ժողովրդի միասնականության խորհրդանիշ»

Պարի միջազգային խորհրդի նախագահ, դոկտոր Ալկիս Ռաֆտիսը Հայկական պետական մանկավարժական համալսարանում մասնակցեց Պարի միջազգային օրվան նվիրված միջոցառումներին:

Պարարվեստում հայ ժողովրդի բարեկամը հանգամանորեն տեղյակ է ղարաբաղա-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակին, ինչպես նաև այն փաստին, որ սահմանին հակառակորդի նենգ հարվածից զոհվել է ՀՊՄՀ-ի պարարվեստի բաժնի ուսանող, սերժանտ Նորայր Գասպարյանը: Նրա առաջարկով՝ քաջարի զինվորը հետմահու կպարգևատրվի «Պարի վաստակավոր»-ի կոչմամբ, իսկ նրա լուսանկարն այսօր կտեղադրվի Պարի միջազգային խորհրդի պաշտոնական կայքում՝ ի լուր թշնամու ապօրինի ոտնձգությունների:

«Պարը մշակութային այն արժեքն է, որ դարեր շարունակ ուղեկցել է մեզ: Այսօրինակ մշակույթ ունեցող ազգը անպարտելի է իր ոգով, ապացույցը՝ առաջնագծի այն հերոս տղաները, որ պաշտպանում են ոչ միայն հայրենիքի, այլև մեր մշակույթի և հավատքի սահմանները. դրանից ներս

ազգի միասնությունն է»,- ասաց պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանն ու հավելեց՝ պարը եղել և մնում է հայ ժողովրդի միասնականության խորհրդանիշ:

Ալկիս Ռաֆտիսը խոստովանեց՝ Հայաստանում իրեն զգում է ինչպես տանը, իսկ Մանկավարժականում՝ ունենում դրական հույզեր և ապրումներ. «Տարիներ առաջ դասախոսելիս բողոքում էի, հիմա՝ կարոտում»:

Օրը կարևորվեց նաև Պարի միջազգային խորհրդի հայաստանյան մասնաճյուղի բացմամբ, որը կղեկավարի պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը:

Ալկիս Ռաֆտիսը վկայականներ հանձնեց մասնաճյուղի առաջին անդամներին՝ ուսանողներին և «Բերդ» պարային անսամբլին, ինչպես նաև դիպլոմներ՝ դասախոսներին և ուսանողներին՝ 150 ժամ տևողությամբ հայկական պարերի ուսումնասիրում պարային դաս անցնելու համար:

Կարեն Գևորգյանը մասնագիտական տոնի առթիվ շնորհավորեց պարի երախտավորներին, բոլոր ժամանակների նվիրյալներին, շնորհակալություն հայտնեց հայկական պարը աչքի լույսի պես պահելու, սերնդեսերունդ փոխանցելու համար՝ մաղթելով ստեղծագործական նոր վերելքներ և հաջողություններ:

Պարարվեստի մանկավարժության ամբիոնի դասախոս Ալինա Դանիելյանը մասնագիտական օրվա առիթով ներկայացրեց իր հեղինակած «Բեմական-բնութագրական պարի հիմունքները» ուսումնամեթոդական ձեռնարկը, որտեղ առաջին անգամ համակողմանի անդրադարձ է կատարվել բեմական-բնութագրական պարի անցած ուղուն, ներկայացվել պարի տեսակի և դասական պարի միջև առկա կապը, դրանց նմանություններն ու տարբերությունները:

Հեղինակը լիահույս է՝ գիրքը շտեմարան և ուղեցույց կդառնա սկսնակ պարողների, ուսանողների, մանկավարժ-պարուսույցների համար, հատկապես, որ բնութագրական պարի վերաբերյալ մայրենի լեզվով դասագրքերի կարիք մեզանում դեռևս կա:

Միջոցառումներին ներկա էին ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, Պարարվեստի փառատոնների միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Էմիլ Դիմիտրովը, պարարվեստի երախտավորներ, հյուրեր:

Նշենք, որ Պարի միջազգային կոմիտեի նախաձեռնությամբ 1982 թվականից ապրիլի 29-ը նշվում է որպես պարի միջազգային օր՝ ի հիշատակ այդ օրը ծնված ֆրանսիացի բալետմեյստեր, բալետի տեսաբան Ժան-Ժորժ Նովերի (1727-1810):

*Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ*

# «Ամառային դպրոց 2016»

Մանկավարժական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի 81 ուսանող մասնակցեց բուհի նախաձեռնությամբ «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում անցկացվող վիճակահանությանը:

Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Բելառուս, Լիտվա, Ֆինլանդիա, Հունգարիա՝ սրանք ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ի ուսանողներին հյուրընկալող այն երկրներն են, որոնց ուսանողներն էլ կլինեն նաև Մանկավարժականի Աղավնաձորի ուսումնական բազայում: Արդեն 4-րդ տարին անցկացվող ծրագրին մասնակցելու համար մրցույթին դիմել էր շուրջ 200 ուսանող, ընտրվել նրանցից 74-ը. ևս 7-ն էլ վիճակահանությանը մասնակցեց հատուկ սկզբունքով: Նրանք նախորդ տարի Աղավնաձորում հանգիստն անցկացրած այն ուսանողներն էին, որոնք այս տարի դեռ ավարտական կուրսում չեն և ծրագրին կմասնակցեն Հայաստանի սահմաններից դուրս:

Այս տարի ևս կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի՝ մրցույթի պահանջները հաղթահարած 10 ուսանող, առանց վիճակահանությանը մասնակցելու, կմեկնի Մոսկվայի հոգեբանամանկավարժական համալսարան:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը շնորհավորեց մրցակցությունը հաղթահարած ուսանողներին՝ վստահեցնելով, որ համագործակցության սահմանները ընդլայնելուն զուգահեռ բարձրացել է նաև մասնակիցների որակը. «Ամենատարբեր երկրների երիտասարդների հետ շփումը կնպաստի լեզվական անջրպետի վերացմանը, տարբեր երկրների միջև մշակութային կապերի ամրապնդմանը. դա շատ կարևոր է նաև Մանկավարժականի միջազգայնացման տեսանկյունից»:

Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանն էլ ևս մեկ անգամ հիշեցրեց, որ մրցույթի արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովը եղել է օբյեկտիվ և անաչառ, հաշվի են առնվել մրցութային գնահատականները, հաղորդակցման տարբեր հմտություններն ու կարողությունները, իսկ տարբեր մասնակիցների միջև հավասար միավորների դեպքում՝ նաև ուսանողի առաջադիմությունը:

Ի դեպ, վերոնշյալ խնդիրների պարզաբանման համար հանդիպում է կազմակերպվել վիճականությունից դուրս մնացած ուսանողների հետ:

Նշենք, որ «Ամառային դպրոց» փոխանակման ծրագրին կմասնակցեն նաև ուսանողներ վերոնշյալ երկրների գործընկեր բուհերից. նրանք կհյուրընկալվեն ՀՊՄՀ-ի Աղավնաձորի ուսումնական բազայում, կմասնակցեն կրթական և մշակութային գերհագեցած ծրագրին:

*Քրիստինե Մելքոնյան*

# ՄԵՐՕՐՅԱ ՀԵՐՈՍԸ

Դավիթ Արկադիի Խատայան, անուն, որը օրեր առաջ քչերին էր հայտնի, իսկ այսօր արդեն դարձել է ծանոթ ու անծանոթ մարդկանց հպարտության առիթը:

Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության գոտու ողջ երկայնքով հակառակորդի նախաձեռնած հարձակողական գործողությունները հետ մղելու և վերջինիս պատժիչ հարվածներ հասցնելու ընթացքում բարձր մարտական ու բարոյականային հատկանիշներով աչքի են ընկել բազմաթիվ ժամկետային զինծառայողներ, ովքեր կարողացել են հաճախ փոխարինելով անգամ զոհված կամ վիրավոր հրամանատարին, տվյալ հատվածում մեր ուժերի օգտին բեկել մարտական գործողությունների ընթացքը: Նրանց շարքում էր նաև Մանկավարժական համալսարանի շրջանավարտ Դավիթ Խատայանը, ով օրեր առաջ վերադաս հրամանատարության կողմից արժանացավ լեյտենանտի սպայական կոչման:

2007-2009 թթ. Դավիթ Խատայանը սովորել է ՀՊՄՀ վարժարանի ֆիզիկամաթեմատիկական հոսքում, ապա ուսումը շարունակել Մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի կերպարվեստ և գծագրություն բաժնում:

«Համեստ, օրինակելի, կարգապահ, մարդկային բարձր արժանիքներով օժտված անձ, հայրենասեր, կարճ ասած՝ լավ մարդ»,- ՀՊՄՀ հենակետային վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանն այսպիսի խոսքերով է նկարագրում վարժարանի շրջանավարտին և հպարտությամբ հավելում է.«Ուրախ եմ, որ հենց այս դպրոցում է սովորել Դավիթը»: Մյուս ուսուցիչներն էլ հաստատում են ասվածը և ևս մեկ անգամ փաստում, որ մեր օրերի հերոս է Դավիթը:

«Ռազմական գործողությունների մասին ոչինչ չի պատմում և չի խոսում այդ թեմայով: Դավիթս շատ համեստ է ու կազմակերպված, պարգևի մասին համացանցից ենք իմացել: Հպարտ եմ և ուրախ, բայց նաև անհանգիստ, որ այս լարված իրավիճակում է հայտնվել»,- որդու՝ լեյտենանտի սպայական կոչմանն արժանանալու մասին այսպես է խոսում Դավթի մայրը՝ Աննա Խատայանը, ով աշխատում է ՀՊՄՀ վարժարանում որպես անգլերենի ուսուցչուհի:

Դավթի մանկության մասին պատմելիս մայրը հուզմունքով հիշեց, որ շատ տարբեր նախասիրություններ ուներ, իսկ բանակ զորակոչվելու օրը գաղտնի է պահել: «Դավիթը հպարտորեն ասում էր, թե ումից է պակաս, որ չգնա ծառայելու»,- ասաց Աննա Խատայանը և հավելեց, որ ուսանողական տարիները մեծ նշանակություն են ունեցել Դավթի և նրա մտածելակերպի վրա՝ հատկապես հայրենասիրության առումով:

Դավթի հրամատարը՝ 23-ամյա կապիտան, վաշտի հրամանատար Արգիշտի Գաբոյանը և ծառայակից ընկերներից շատերը ապրիլի 2-ի պատերազմական գործողությունների արդյունքում հորոսաբար զոհվեցին, Դավիթ Խատայանն ու մյուս ընկերները, փոխարինելով

վերջիններին, մարտական իրավիճակը իրենց ձեռքն են վերցնում և ավարտում հոգուտ իրենց: «Արիության շքանշանը, պատվոգիրը և այլ պարգևները Դավթին չեն ուրախացնում, նա կորցրել է մարտական ընկերներին և այդ ամենը ձեռք է բերել նրանց արյան գնով»,- որդու ասված խոսքերն է փոխանցում մայրը:

10 օր առաջ որդուն տեսած մայրը հպարտությամբ, հուզմունքով ու կարոտով խոսում է որդու մասին և ցույց է տալիս վզի խաչը. «Ես ու որդիս նույն օրհնված խաչն ենք կրում, հեռավորության վրա այս պահապան խաչով ենք միմյանց զգում. ես նրան ուժ եմ տալիս, իսկ երբ տաքանում է խաչս՝ զգում եմ, որ հաստատ որևէ զինվորի կյանք է փրկում», - արցունքն աչքերին և միաժամանակ հպարտորեն՝ նշեց Աննա Խատայանը: և հավելեց, որ Դավթին դուր չի գա, որ պարգևի և առհասարակ իր մասին բարձրաձայնվում է»:

Մեկ ամսից Դավիթը զորացրվելու է, սակայն մայրը վստահ չէ, որ նա չի շարունակի զինվորական ծառայությունը: «Գործս կիսատ եմ թողել, պետք է ավարտեմ, մա՛մ, քեզ լավ նայի, չկոտրվես հանկարծ, որ ես էլ սահմանին լավ լինեմ»,- այս խոսքերով էլ հրաժեշտ է տվել Դավիթը մորը և խոստացել՝ անպայման հետ է վերադառնալու:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

## «Եթե սիրի, կկանգնի պաշտպանության»

Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում գրող, հրապարակախոս, արձակագիր «Շուշի» բարեգործական հիմնադրամի նախագահ Բակուր Կարապետյանի հետ: Հանդիպմանը ուսանողները դիտեցին Բակուր Կարապետյանի հեղինակային ֆիլմը՝ նվիրված Շուշիի բերդաքաղաքին:

Հեռուստալրագրության ամբիոնի դասախոս Վարուժան Օլքինյանը երկար տարիներ աշխատելով իր գործընկերոջ հետ՝ նշեց. «Բակուր Կարապետյանը հայկական հեռուստատեսության պատմության մեջ մեծ ավանդ ու ներդրում ունի: Ղարաբաղյան պատերազմի շրջանում նա այն սակավաթիվ վավերագրողներից էր, ում աշխատանքի արդյունքը տեսանելի է մինչ օրս»:

Ծագումով արցախցի, 32 գրքի և 8 վավերագրական ֆիլմի հեղինակը մինչ ֆիլմի դիտումը ուսանողներին ներկայացրեց մասնագիտական փորձը, պատմեց ֆիլմի նկարահանման ընթացքի մասին:

26 րոպեանոց ֆիլմը պատմում է Շուշիի մասին՝ սկզբնավորումից մինչև ազատագրումը: Ֆիլմում ներկայացված ամեն մի խաչքարը հեղինակը նմանեցնում է մի մարդու ճակատագրի, իսկ Շուշիի քարերը, ըստ նրա, հիշում են և պատմում իրենց պատմությունը: Իր հողին և ջրին խորապես կապված Բակուր Կարապետյանը կարևորեց ուսանողների շրջանում հենց այս ֆիլմի դիտումը՝ ընդգծելով. «Մատաղ սերունդը պետք է տեսնի, որ սիրի. եթե սիրի, կկանգնի պաշտպանության»:

Հեղինակը ֆակուլտետի գրադարանին նվիրեց իր հեղինակած գրքերից:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

## Միջբուհական գիտաժողով

Մանկավարժական համալսարանի և ՀՀ ԳԱԱ ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ ՀՊՄՀ-ում կայացավ միջբուհական գիտաժողով, որին մասնակցում էին Մանկավարժական, Երևանի պետական, Գլաձորի համալսարանների և Գիտությունների ազգային ակադեմիայի ուսանողները:

Մանկավարժական համալսարանի ուսումնագիտական հարցերի գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը բուհի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի անունից ողջունեց գիտաժողովի մասնակիցներին՝վստահություն հայտնելով, որ արդեն ավանդույթ դարձած նմանատիպ ձեռնարկները որակական նոր տեղաշարժեր են ապահովում, ինչպես ուսանողների կոգնիտիվ, այնպես էլ սոցիալական վարքի ձեռագրաբանության մեջ: Պրոռեկտորն իր գոհունակությունը հայտնեց ներկայացվող թեմաների վերաբերյալ՝ նկատելով, որ դրանք ընդգրկում են գիտական լայն շրջանակներ՝ հոգեբանություն, ինֆորմատիկա, պատմություն, տնտեսագիտություն, և արծարծում են գիտական կարևորագույն խնդիրներ ու կոնկրետ հարցեր. «Ոգևորիչ է նաև այն, որ գիտաժողովի մասնակիցները մեծամասամբ մագիստրոսներ են. ՀՊՄՀ-ն վերջին 4 տարիներին մագիստրոսական կրթությունը շեշտադրում է որպես կարևորագույն ոլորտ և առկա բարեփոխումները հիմնականում ուղղված են ինչպես մագիստրոսական կրթական ծրագրերին, այնպես էլ առանձին առարկայացանկին: Հաշվի է առնվում յուրաքանչյուր ֆակուլտետի ուղղվածությունը, հետաքրքրվածությունը, գիտական նորույթն ու հետազոտական համալսարան հասկացության ռազմավարությունը»:

ՀՊՄՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ Մարիամ Մելքումյանը գիտաժողովը համարեց ակտիվ համագործակցության արդյունք: «Այս գիտաժողովի ընթացքում հնարավորություն կունենանք արդիական թեմաների վերաբերյալ ծանոթանալ ուսանողների կողմից ներկայացվող տեսական և պրակտիկ վերլուծություններին: Գիտական նստաշրջանի նպատակն է տարբեր սեմինարների ընթացքում ուսանողների ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները պրակտիկորեն ներկայացնելը»,- ասաց Մարիամ Մելքումյանը և հավելեց՝ գիտաժողովի թեմաներում հատկանշական է հատկապես ռազմական թեմաներին վերաբերող զեկուցումները:

Հաշվի առնելով վերջին ապրիլյան դեպքերը՝ ուսանողներն իրենց զեկուցումներում անդրադարձան Խոջալուի ռազմական գործողություններին և ադրբեջանական կեղծարարությանը, պատերազմին՝ որպես կոնֆլիկտի հոգեբանական բնութագրի, մարտական գործողությունների մասնակից մարտիկների սոցիալ-հոգեբանական վերա-

հարմարմանը խաղաղ պայմաններում, կին զինծառայողների զինվորական գործունեության մեջ ընդգրկվելու հոգեբանական դրդապատճառներին, առաջին հանրապետության հռչակման նախադրյալներին: Անդրադարձ կատարվեց նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը և անտեսմանը ազգային օրենսդրությամբ, երեխաների իրավունքներին ներպետական և միջազգային իրավունքներում, ներառական կրթության սահմանային հիմնախնդիրներին, հոգեկան տրամվային, օժտված երեխաների հոգեբանությանը, համակարգչային կախվածության ազդեցությանը դեռահասի ձևավորման գործընթացում և այլ թեմաների:

Սրբուհի Գևորգյանն ամփոփեց և մեկ անգամ էլ կարևորեց ընտրված թեմաների արդիականությունը՝ ընդգծելով, որ փոփոխվող հասարակությունում և ներկայիս տագնապալից աշխարհում անձի հոգեկան կերտվածքի անվտանգությանը, պատմական ինքնությանն ուղղված յուրաքանչյուր քայլ նոր իմաստ և վերլուծության առաջարկ է դառնում:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

# Ամփոփիչ ատեստավորման քննությունները կանցկացվեն էլեկտրոնային եղանակով

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ավանդույթի համաձայն ամեն տարի ամփոփիչ ատեստավորման քննություններից առաջ հանդիպում է բուհի 10 ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների հետ:

Հանդիպման նպատակը՝ ուսանողներից լսել այն հիմնական մտահոգություններն ու խնդիրները, որոնց նրանք հանդիպել են ուսումնառության ընթացքում, ինչպես նաև ներկայացնել քննությունների կազմակերպման նոր ընթացակարգը, պատասխանել ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Ռեկտորը հանդիպման սկզբում ուսանողներից հետաքրքրվեց, թե ովքեր են աշխատում՝ ըստ իրենց մասնագիտության, այնուհետև հավելեց, որ ավարտական քննությունների լավ արդյունքները նրանց հնարավորություն կընձեռի ունենալ լավ աշխատանք:

«Մեր լավագույն շրջանավարտների ճակատագրով մենք հետամուտ ենք լինում, խիստ հետաքրքրված ենք, որ նրանք լավ աշխատանք ունենան: Մանկավարժական համալսարանի աշխատակիցների շարքերը վերջին տարիներին համալրվել են հենց մեր բուհի շրջանավարտներով»,- ասաց Ռուբեն Միրզախանյանը:

Ռեկտորը նշեց, որ այս տարի ավարտական քննությունները կանցկացվեն նոր ընթացակարգով՝ էլեկտրոնային եղանակով. սակայն դեռևս միայն 3 ֆակուլտետում՝ Բանասիրական, Մաթեմատիկայի, Ֆիզիկայի և Ինֆորմատիկայի, Կենսաբանության, Քիմիայի, աշխարհագրության:

«Մենք հետաքրքրված ենք, որ քննություններն անցկացվեն պատշաճ մակարդակով. քննասենյակում առկա մասնագիտական և ուսումնաօժանդակ գրականությունը, ծրագրերն ու բառարանները կօգնեն ցուցաբերել այս տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքները՝ առավել հեշտ դարձնելով քննական գործընթացը»,- ընդգծեց ռեկտորը և հավելեց, որ ուսանողներն ավարտական քննական հանձնաժողովի թույլտվությամբ կունենան քննական հարցերը փոխելու 3 հնարավորություն, իսկ չպատասխանելու դեպքում՝ հնարավորություն կունենան վերահանձնելու հաջորդ ուսումնական տարում:

Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Սամվել Ասատրյանը ներկայացրեց քննական ընթացքի նոր՝ էլեկտրոնային ձևը, որն, ի դեպ, մշակվել և ծրագրավորվել է ՀՊՄՀ-ի ինֆորմատիկայի բաժնի բակալավրիատի ուսանողների կողմից:

Բուհի ղեկավարը պատասխանեց պրակտիկայի ժամաքանակի ավելացման, թղթապանակն ավարտական քննություններում ներառելու, «Մանկավարժություն» առարկան ավարտական կուրս տեղափոխելու, պարտադիր զինվորական ծառայություն անցած և ուսումը բուհում շարունակել ցանկացողներին արտոնություններ տալու և ուսանողներին հետաքրքրող այլ հարցերին: Նա ուսանողներին մաղթեց քննությունների հաջող մեկնարկ և արդյունավետ ավարտ:

# «ԱՐՑԱԽԸ ՄԵՆՔ ԵՆՔ»

Գայի անվան 129 դպրոցում ապրիլի 15-ին թևածում էր հայրենասիրական ոգին: Դպրոցում ապրիլյան հիշատակի օրվա և այս օրերի հերոսական պայքարի գունապատկերին անց էին կացվում դասղեկական ժամեր և երեխաների նախաձեռնությամբ միջոցառումներ:

Օրը սկսվեց սևակյան համազանգերի ղողանջով: Վեցերորդ և ութերորդ դասարանների աշակերտների շնորհիվ Սևակի ստեղծագործական գլուխգործոցը հառնեց նորովի: Պոեմի յուրաքանչյուր հատվածը աշակերտները ներկայացնում էին մեծին հատուկ զգացական ողջ ներուժով, իսկ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի տիկին Ավետիքյանի տեղեկությունները պոեմի գաղափարական բովանդակության և վերլուծության մասին նպաստում էին աշակերտների ոգու բարձրացմանը: Այդ ոգին դրսևորվեց արդեն յոթերորդ դասարանում: Աշակերտների ցանկությամբ ու հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի տիկին Հայրապետյանի օժանդակությամբ դասղեկի ժամը վերածվել էր Արցախ աշխարհի հերոսական անցյալի ու ներկայի դրվագների նկարագրության: Միջոցառումը կրում էր «Արցախը մենք ենք» խորագիրը: Նախ կուռ տրամաբանությամբ աշակերտները ներկայացրին հայրենիք և հայրենասիրություն հասկացությունների էությունը և ապացուցեցին, որ մեծանալով շարունակելու են իրենց հայրերի և եղբայրների հայրենիքի պաշտպանության սուրբ գործը: Հուզիչ էին աշակերտուհիների նամակները՝ ուղղված սահմանին ծառայող իրենց եղբայրներին: Միջոցառումը համեմված էր հայրենասիրական երգերով:

Միջոցառման ավարտին իրենց կարծիքը և շնորհակալական խոսքը հայտնեցին Թամարա Պետրոսյանը և պրակտիկայի ղեկավար Ռուզան Դոլուխանյանը, իսկ պրակտիկանտների թաց աչքերը վկայում էին, որ միջոցառումը լիովին ստացվել է:

***Աստղիկ ԲՈՅԱՋՅԱՆ***
***Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս***

# «Հայաստան աշխարհս»

Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում կայացավ բուհի շրջանավարտ Գառնիկ Մելիք-Կարապետյանի «Հայաստան աշխարհս» ֆիլմաշարի 3 մասերի ցուցադրությունը. ի դեպ, վերջին մասը պրեմիերա էր:

Կինոօպերատորության բաժնի նախկին ուսանողի հեղինակած ֆիլմերը կառուցված են բացառապես լուսանկարներով. յուրաքանչյուրում՝ 30.000-35.000, իսկ վերջինում՝ 50.0000 լուսանկար: Դիպլոմային աշխատանքից 3-5 րոպե տևողությամբ կինոպատկերի վերածված ֆիլմերն ամբողջությամբ ներկայացնում են Հայաստանը՝ իր ողջ գեղեցկությամբ և առանձնահատկություններով:

«Ես եմ» միջազգային և «Արտ Ֆեստ» երիտասարդական ֆիլմերի փառատոներին հատուկ մրցանակների արժանացած ֆիլմերը բարձր գնահատեց նաև Մանկավարժականի հանդիսատեսը:

Հայաստանն առաջինը նման ձևաչափում ներկայացրած կինոօպերատորը դժվարանում է խոսել իր ֆիլմերում արված լուսանկարների առանձնահատկությունների մասին, սակայն նկատում է՝ այն չունի միայն ճանաչողական բնույթ: Ըստ ֆիլմը դիտողների կարծիքների՝ հոգի կա՝ «Դժվար է ներկայանալ մի վայրում, որտեղ կատարել ես առաջին քայլերդ: Երջանկահիշատակ օպերատորներ Ալբերտ Յավուրյանի ու Մարտուն Շահբազյանի շնորհիվ կայացավ իմ մասնագիտական աճը»,- նշեց Գառնիկ Մելիք-Կարապետյանն ու անկեղծացավ՝ օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հրավերն ընդունել է մեծ սիրով, իսկ առաջատար մասնագետների նկատառումներն ու առաջարկները՝ մասնագիտական պատրաստակամությամբ: Նորաթուխ օպերատորը խոստացավ իր ֆիլմերով չձանձրացնել հանդիսատեսին և հանդես գալ միայն նոր ու հետաքրքիր աշխատանքներով:

***Մարինե ԱՂԵԿՅԱՆ***

# Խաղաղության շունչը՝ կուռմադդումներում և գոբելենում

Գեղարվեստի ֆակուլտետի ճեմասրահում թևածում էր խաղաղության շունչը. հայկական կուռմադդումներն ու գոբելենները զարդարել էին ճեմասրահը: Կիրառական արվեստի բաժնի 3-րդ կուրսի ուսանող Հերիքնազ Խաչիկյանը «Խաղաղության շունչը» խորագրով առաջին անհատական ցուցահանդեսը նվիրեց սահմանում կանգնած հայ զինվորներին, որոնց շնորհիվ էլ ամեն օր զգում ենք խաղաղության շունչը:

Հերիքնազ Խաչիկյանը ցուցահանդեսին ներկայացրել էր 26 կուռմադդում, որոնցից մեկը՝ խեցե, և 8 գոբելեն: Դդումների նկատմամբ սերն արթնացել է դեռ մանկուց, երբ իմացել է, որ գաղթի տարիներին իր տատը, չունենալով կիրառելի պարագաներ, դդումների մեջ պահել է սնունդ և այլ անհրաժեշտ իրեր:

«Այդ ամենից հետո որոշեցի գունազարդել դդմիկները. փնտրեցի, գտա կուռմադդումներ, մշակեցի դրանք ու պատկերազարդեցի: Կիրառական արվեստի յուրաքանչյուր նոր ճյուղ ուսումնասիրելուց հետո անպայման դրանք օգտագործում եմ դդմիկների վրա»,- ասաց Հերիքնազ Խաչիկյանը և հավելեց, որ մեծ սիրով է աշխատում դդումների հետ և պատրաստվում է ուսումնասիրել նաև մետաղի դիզայնը, որպեսզի այն ևս կիրառի դդմիկների վրա:

Երիտասարդ արվեստագետը ներկայացված աշխատանքներից իր համար առանձնացրեց «Մի օր» գոբելենը, որը նվիրված է իր պապին և Ցեղասպանության 100-րդ տարելիցին: Հերիքնազը մեծ ակնկալիքով սպասում է այն բաղձալի օրվան, երբ մի օր կգնա և կտեսնի իր պապի տունը:

Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի վարիչ Անուշ Եղիազարյանը հավելում է, որ Հերիքնազը մեծ ջանքեր և էներգիա է ներդրվել այս ցուցահանդեսի բացման համար: «Թող նման ցուցահանդեսները լինեն շարունակական, երիտասարդ տարիքում և այս պայմաններում ներկայացված ցուցահանդեսն արդեն իսկ արժեք ունի: Ներկայացված գոբելենների արվեստի մեջ նկատելի է բարձր մակարդակ, ցանկանում եմ, որ հետագայում ևս շարունակես զբաղվել գոբելենով»,- ասաց Ա. Եղիազարյանը և հավելեց՝ ողջունելի է, երբ ուսանողները ստեղծագործում են նաև համալսարանից դուրս՝ տան պայմաններում»:

«Ինձ համար հայտնագործություն էին այս աշխատանքները, ինձ բախտ վիճակվեց տեսնել դրանք, որը մինչ օրս չէի տեսել: Ամեն դդում նմանեցված է մի մարդու կամ անձի. Դրանք կյանքով լեցուն են և ունեն կերպարային բնույթ: Այս ցուցահանդեսի հաջողությունը հեղինակինն ու իր դասախոսներինն է»,- ասաց արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Արա Հակոբյանը:

Արվեստաբանության ամբիոնի դասախոս Արամայիս Գևորգյանն էլ կարևորեց ցուցահանդեսի ինքնատիպությունը, մոտեցումը, մտածելակերպը. «Հեղինակը ոչ մի սահմանափակում չի դրել. նա պրպտել, մտածել, ծավալվել և ստեղծել է այս յուրօրինակ աշխատանքները: Դրանք իրենց ձևով և գույներով ինքնատիպ ու գրավիչ են. այստեղ ներկայացված չեն պարզապես աշխատանքներ, ակնառու է, որ հեղինակը նպատակասլաց աշխատել է՝ ապացուցելու համար, որ մտածելու և ստեղծագործելու կարողություն ունի, պիտանի է հասարակությանն ու ողջ աշխարհին»:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Զարուհի Խաչատրյանը ուսանողների անունից շնորհավորեց բոլորին ցուցահանդեսի բացման առթիվ և ընդգծեց, որ Հերիքնազ Խաչիկյանը միշտ տարբերվում է իր ոճով ու առանձնահատկությամբ:

Հերիքնազը շնորհակալություն հայտնեց իր ծնողներին, դասախոսներ Կարինե Մակարտիչանին և Սրապիոն Դանիելյանին, իհարկե, հայ զինվորին՝ որպես խաղաղության խորհրդանիշ՝ ցուցահանդեսն ամփոփելով ճերմակ աղավնու թռիչքով:

***Սոնա ԱՐԱՄՅԱՆ***

# Հայաստանի Ժաննա դ'Արկը

Նրան համարում են Հայաստանի Ժաննա դ'Արկը՝ կին, ով անցնելով Ցեղասպանության անհամար սարսափներով՝ հերոսաբար վերապրեց դրանք իր տառապանքների մասին պատմող և աշխարհին ճշմարտությունը ներկայացնող գրքում և կինոնկարում:

Ավրորա Մարդիգանյանի իրական անունն Արշալույս Մարտիկյան էր: Նա ծնվել է 1901թ. Դերսիմ գավառի Չմկածագ քաղաքում (այժմյան Թուրքիայի Թունջելիի գավառ), ունևոր ագարակատիրոջ և մետաքսագործի ընտանիքում: Արշալույսը ութ երեխաներից երրորդն էր: Նա մահացավ 93 տարեկանում Կալիֆորնիայի ծերերի խնամքի կենտրոններից մեկում: Իր կյանքն ապրել է՝ հաղթահարելով մանկության սարսափելի հուշերն ու զրկանքները և ուժ գտնելով իր մեջ այլոց օգնելու համար:

Արշալույսն օժտված աշակերտ էր և խոստումնալից ջութակահար: Երբ վրա հասավ 1915-ի մղձավանջը, ավագ քույրը նշանված էր, իսկ եղբայրն արդեն բնակվում էր Միացյալ Նահանգներում: Հորն ու եղբորը սպանեցին նրա աչքի առաջ, իսկ ինքը մոր և քույրերի հետ բռնությամբ կցվեց դեպի Սիրիայի անապատները տեղահանվող հայուհիների քարավաններին:

85 ցենտին համարժեք գնով Արշալույսը վաճառվում է ցեղապետերից մեկի հարեմին, որտեղից նա հաջողեցնում է փախչել:

Ստրկավաճառները բռնում են, բայց նա կրկին կարողանում է ազատվել: 18 ամիս շարունակ քայլելով, հատելով Դերսիմի (Մնձուրի) լեռնաշղթան, թաքնվելով քարայրերում ու սնվելով բույսերով և արմտիքով՝ նա, հյուծված, բոբիկ ու կիսամերկ, հասնում է ռուսական զորքերի կողմից ռազմակալված Էրզրում, որտեղ էլ նրան ի վերջո իրենց հոգածության ներքո են վերցնում ամերիկյան միսիոներները:

Նրա բարեհոգությունը, որը մղեց իր հերթին խնամելու մահմեդականներից փրկված հարյուրավոր որբերի, արժանի է գնահատանքի՝ 100 lives նախաձեռնության մաս կազմող մրցանակի անվանակոչմամբ:

Հասնելով Նյու Յորք՝ նրան որդեգրում է մի հայ ընտանիք: Արշալույսը սկսում է թերթերում հայտարարություններ հրապարակել ողջ մնացած եղբորը՝ Վահանին գտնելու համար:

Այս հայտարարությունները գրավում են լրագրողների ուշադրությունը: Ցեղասպանության մասին Արշալույսի վկայությունները 1918 թ. տպագրվում են Նյու Յորքի և Լոս Անջելեսի թերթերում, իսկ նույն տարվա դեկտեմբերին լույս է տեսնում ,«ոչոտված Հայաստան» խորագրով գիրքը: Շապիկին Արշալույսի լուսանկարն էր՝ հայկական ավանդական զգեստը հագին: Գիրքը հաջորդ երկու տասնամյակներին բազմիցս վերահրատարակվում է և վաճառվում 900,000 տպաքանակով՝ ներառյալ իսպաներեն, հոլանդերեն և լեհերեն հրատարակությունները:

1918 թվականը դեռ չէր ավարտվել, երբ Selig Polyscope ընկերության նախաձեռնությամբ կինոռեժիսոր Օսկար Ափֆելը սկսում է աշխատել այդ գրքի վրա հիմնված համր կինոնկարի վրա, որի գլխավոր դերը վերապահված էր Արշալույսին՝ այժմ արդեն Ավրորա Մարդիգանյան անվան ներքո, որն ընտրվել էր նրա ինքնությունը պաշտպանելու նպատակով:

«Հոշոտված Հայաստան» ֆիլմը, որը հայտնի է նաև «Հոգիների աճուրդ» անվամբ, առաջին անգամ ցուցադրվեց 1919 թ. հունվարին Վաշինգտոնում: Փետրվարին Նյու Յորքի «Պլազա» հյուրանոցում տեղի ունեցավ ֆիլմի բազմամարդ և հանդիսավոր պրեմիերան:

Այն ցուցադրվեց ԱՄՆ 23 նահանգներում և միջազգային կինոթատրոններում, իսկ ֆիլմի հասույթը՝ 30 միլիոն ԱՄՆ դոլար, Մերձավոր Արևելքի նպաստամատույցի (Near East Relief) միջոցով ուղղվեց հայ որբերի կարիքներին:

Յուրաքանչյուր պրեմիերայից հետո Ավրորան իր մեջ ուժ էր գտնում բեմ ելնելու և հրապարակավ խոսելու բարձր խավի ներկայացուցիչների առջև: Սակայն նյարդային նման գերլարումն անհետևանք չանցավ: 1920թ. Բուֆֆալո քաղաքում կինոդիտումից հետո նա ուշագնաց եղավ և ընդմիշտ հրաժարվեց հրապարակային ելույթներից:

Հոլիվուդի՝ նրան կինոաստղ դարձնելու ծրագրերը չիրագործվեցին, իսկ քաղաքական հոսանքների վայրիվերումները հանգեցրին նրան, որ 1920-ականներին «Հոշոտված Հայաստան» գրքի և կինոնկարի հանդեպ ուշադրությունը սկսեց մարել և դրանք աստիճանաբար մոռացության մատնվեցին: Ֆիլմի ամբողջական տարբերակը հետագայում անվերադարձ կորավ: Ավրորան վերադարձավ Նյու Յորք և 1929 թ. ամուսնացավ հայազգի ներգաղթյալ Մարտին Հովեյանի հետ: 1931 թ. ծնվեց նրանց որդին՝ Միքայելը: Երջանիկ լինել Ավրորային, սակայն, չհաջողվեց. եղբորը նա այդպես էլ չգտավ, փորձեց ինքնասպան լինել, իսկ ամուսնու մահից հետո կորցրեց որդու հետ կապը:

Ավրորա Մարդիգանյանին մենք այսօր հիշում ենք նրա բացառիկ կամքի, ծանրագույն տառապանքների գնով աշխարհին փոխհատուցելու կարողության շնորհիվ:

***Նյութը՝ «Ավրորա» մրցանակի» պաշտոնական կայքից:***

# Համերգ

«Երբ 24 - ամյա Լիլի Խաչատրյանը Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ավարտելուց հետո աշխատանքի անցավ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի նվագարանների ամբիոնում՝ նրան գայթակղեց այն կատարողական բուռն մթնոլորտը, որը տիրում էր այդտեղ: Տարին երկու անգամ, բարձրանալով բեմ, յուրաքանչյուր դասախոս պետք է կատարեր նախապես հայտարարված դասականների ստեղծագործություններից: Այդ հանգամանքը ստիպում էր դասախոսներին մշտապես մնալ կատարողական պատշաճ մակարդակի վրա:

Անցան տարիներ, ամբիոնում կազմակերպվում էին ուսանողական տարբեր մրցանակաբաշխություններ, ուսանողները ծանոթանում էին «հիմնական նվագարան» առարկայի կատարողական վարպետության նրբություններին: Մանկավարժական փորձը հետզհետե հարստանում էր, և Լիլի Խաչատրյանը որոշում է ամեն ուսումնական տարեվերջին կազմակերպել դասարանական համերգներ: Համերգները տարբերվում էին թեմաների ընտրությամբ: 2013 թվականին կազմակերպվեց համերգ-դասախոսություն՝ Էդուարդ Բաղդասարյանի «Վեց Պրելյուդ»-ի տեսական և կատարողական վերլուծություն, որին մասնակցում էին Լ. Խաչատրյանի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Արշակյանը և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Աննա Աղաբեկյանը: 2007-ի համերգը նվիրված էր Մոցարտի ծննդյան 250-ամյակին, որին մասնակցում էր վերջինիս ասպիրանտ Աննա Միրզոյանը: 2010-ին համերգը նվիրված էր Շոպենի ծննդյան 200, 2015-ին՝ Բախի 330-ամյակին, որին մասնակցում էին Շաքե Թադևոսյանը և համալսարանի ջութակի անսամբլը՝ դոցենտ Յուրի Ավետիսյանի ղեկավարությամբ»,- ներկայացնում է հանդիսավարը:

Այս անգամ համերգի առանձնահատկությունն այն էր, որ համերգի դաշնամուրային մասում ելույթ ունեցան համալսարանի հեռակա բաժնի ուսանողները: Իսկ համերգի վոկալ-դաշնամուրային 2-րդ մասում համալսարանի իլլյուստրատոր, երգչուհի Տաթևիկ Մովսիսյանի և կոնցերտմայստեր, երգիչ Ռուբեն Կարասեֆերյանի կատարմամբ հնչեցին Լ. Խաչատրյանի հեղինակային երգերը:

Ներկաները համերգի առաջին մասում ունկնդրեցին Ֆրեդերիկ Շոպենի, Իոհան Սեբաստիան Բախի, Միխայիլ Գլինկայի, Սերգեյ Ռախմանինովի, Միքայել Թարիվերդիևի, Առնո Բաբաջանյանի, Գարիկ Գրիգորյանի ստեղծագործություններից:

Ունկնդիրներին հիացրին հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողուհիներ Անի Գալստյանի և Սեդա Թորոսյանի, 3-րդ կուրսի ուսանողուհի Մերի Բաբայանի կատարումները:

Համերգի 2-րդ բաժնում հնչեցին Լիլի Խաչատրյանի հեղինակային երգերը. «Սպասում» (խոսք Արամայիս Սահակյանի), «Քո աչքերի դեմ» (խոսք Վահան Տերյանի) , «Մտորում» և «Քաղցր հուշ» (խոսք Ալիսա Աբգարյանի), «Կակաչ» (խոսք Մարո Մարգարյանի), «Ճաք է տվել ապակին» (խոսք Սիլվա Կապուտիկյանի), «Я ошибся» և «Месяц» (Նահապետ Քուչակի, թարգմ. Наум Гребнев), «Мне грустно» և «Не жалею» (խոսք՝ Սերգեյ Եսենինի), «Լճակ» (խոսք Պետրոս Դուրյանի), «Лето» (խոսք և երաժշտություն Լիլի Խաչատրյանի) Ռուբեն Կարասեֆերյանի, Տաթևիկ Մովսիսյանի կատարումներով և Լիլի Խաչատրյանի նվագակցությամբ:

# Մեկնարկեց միջֆակուլտետային մրցաշարը

«Ո՞վ է համալսարանում ամենագլխավորը՝ իհարկե ուսանողը. ինչքան լավ է զգում իրեն ուսանողը, այնքան հզոր և ուժեղ է համալսարանը»,-նշեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը՝ տարբեր մարզաձևերի աղջիկների և տղաների թիմերի միջֆակուլտետային մրցումների բացման հանդիսավոր արարողության ժամանակ:

Ֆուտբոլ, վոլեյբոլ, շախմատ, սեղանի թենիս և հրաձգություն մարզաձևերում կմրցեն ՀՊՄՀ-ի 10 ֆակուլտետների, N 57 դպրոցի և Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի թիմերը:

Ի դեպ, վեցօրյա մրցումները կգնահատի մրցաշարին մասնագիտական աջակցություն ցուցաբերած շախմատի և սպորտի ամբիոնի դասախոսներից կազմված ժյուրին:

ՀՊՄՀ-ի ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը տեղեկացրեց, որ մինչ օրս մրցումներն անցկացվել են ըստ մարզաձևերի, սակայն ուսանողական խորհրդի և սպորտի, շախմատի և առողջ ապրելակերպի հանձնաժողովի համատեղ նախաձեռնությամբ այսուհետ դրանք կանցկացվեն համատեղ:

«Սպորտի բնագավառում ևս աբովյանականները հաճախ են ունենում նշանակալի հաջողություններ, ինչին նպաստում է բուհի ղեկավարության՝ սպորտի, առողջ ապրելակերպի հանդեպ մեծ ուշադրությունը»,-նշեց Ներսիկ Մարգարյանն ու հավելեց՝ արվում է ամեն ինչ, որ ուսանողները հաջողությամբ մասնակցեն նաև միջբուհական մրցաշարերին:

Նշենք, որ մրցաշարը կազմակերպվել է ուսանողական խորհրդի սպորտի, շախմատի և առողջ ապրելակերպի հանձնաժողովի (նախագահ՝ Սուրեն Եղիազարյան), ֆակուլտետային հանձնաժողովների ջանքերով և շախմատի և սպորտի ամբիոնի աջակցությամբ:

# «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է»

Ամփոփվեցին Մանկավարժական համալսարանում տարբեր մարզաձևերից աղջիկների և տղաների թիմերի միջֆակուլտետային մրցումների արդյունքները:

10 ֆակուլտետների, հմ. 57 դպրոցի և Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի թիմերը 10 օրվա ընթացքում մրցեցին ֆուտբոլի, վոլեյբոլի, շախմատի, սեղանի թենիսի և հրաձգության մարզաձևերում՝ դրսևորելով մարզական խաղերին մասնակցելու ոգևորություն և փայլուն արդյունքներ:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց մրցաշարի բոլոր մասնակիցներին, հաղթող թիմերին, ինչպես նաև մրցաշարը կազմակերպած ուսանողական խորհրդին ու շախմատի և սպորտի ամբիոնին: Հենց վերջիններն էլ խիստ կարևորում և նպաստում են բուհի մարզական ձեռքբերումներին:

«Մենք ծայրաստիճան կարևորում ենք համալսարանում տարբեր սպորտաձևերի դրվածքը. այն բուհում, որտեղ ֆիզիկական դաստիարակությունը լավ հիմքի վրա է, շահում է ամբողջ ուսումնական գործընթացը»,-նշեց ռեկտորն ու հույս հայտնեց, որ մրցաշարը կդառնա ավանդույթ՝ բուհին բերելով սպորտային նոր նվաճումներ և ձեռքբերումներ:

Մրցաշարի մասնակիցներին շնորհավորեց նաև Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ Սմբատ Լպուտյանը՝ այն մարզասեր ուսանողների համար որակելով իսկական տոն. «Միասնական պայքարը հաղթանակի գրավականն է, եղեք համախմբված և մրցաշարը դարձրեք ամենամյա տոն»:

Միջֆակուլտետային մրցաշարի հանդիսավոր փակման ընթացքում պատվոգրեր և գավաթներ հանձնվեցին ֆուտբոլի, վոլեյբոլի, շախմատի, սեղանի թենիսի և հրաձգության աղջիկների և տղաների թիմերին: Գավաթներ տրվեցին նաև մրցաշարում թիմային առավելագույն արդյունքներ հավաքած ֆակուլտետներին. առավելագույն միավորներով 3-րդ տեղում կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետն է, 2-րդում՝ Հենակետային (ավագ դպրոց) վարժարանը, իսկ 1-ինը կուլտուրայի ֆակուլտետն է:

Շնորհակալագրեր հանձնվեցին նաև վոլեյբոլի աղջիկների թիմին և մարզիչ Զառա Պետրոսյանին՝ օրեր առաջ միջբուհական գավաթը նվաճելու համար:

***Քրիստինե Մելքոնյան***

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը չի վաճառվում:
Հանձնված է տպագրության 06.05. 2016 թ.